

ԴԻԱԿԻ ՍԱՅԼԸ

Իրիկուան դեմ փողոցներէն ամայի,
 Սայլ մը կ'անցնի ճռնչելով:
 Ձի մը աշխետ գայն կը քաշէ, ետեւէն
 Կ'երթայ զինուոր մը զինով:

Ջարդուածներուն դագաղն է ան՝ որ կ'ուղղուի
 Գերեզմանատունը Յայոց:
 Արեւն յետին իր շողերով կը սըփռէ
 Վըրան պատանք մ'ոսկեզօծ:
 Ձին նիհար է. հունձն այդ իր ժա՛նտ տերերուն
 Ան հագիւ հագ կը տանի:
 Ականջներն իր կախած, կարծես խորասոյգ
 Կը մըտմըտայ թէ քանի
 Դարեր պէտք են ժամանելու համար հուսկ
 Մարագն հընձուած սուրբերուն...
 Եւ շըրջակայ պատերուն պոչն իր տատան
 Կը սըրսկէ մի՛շտ, մի՛շտ արիւն:
 Եւ արիւն է որ կը կաթէ յարաբուխ
 Անիւներուն յեցերէն,
 Սայլն իբրեւ վարդ կըրէր, իբրեւ թէ ըլլար
 Արշալոյսին կառքն հրեղէն:
 Յոն են դիերն, իրարու վրայ, որդին մօր
 Գանգուրներով պատանքուած:
 Մին խըրած է իր ամբողջ բռունցքը միւսին
 Տաք վերքին մէջ լայնաբաց:
 Դեռ ծերունի մը ծընօտով ջարդուվշուր
 Կ'յառէ աչքերն երկընքին,
 Որոնց մէջ սեւ անէծք մ'աղօթք մ'իրարու